ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.07.2020թ. թիվ 2011326048 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 08 2020թ. 7-13 10026 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Վերոնիկա Հինյանի թիվ ՄԴ/110157-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Արգիշտի փողոց 7/6 շենքի 151 բնակարանի բնակիչ Վերոնիկա Հինյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.07.2020թ. թիվ 2011326048 որոշումը՝ նշելով, որ տվյալ հատվածում բացակայել են գծանշումները:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

*<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:*

Վիճարկվող որոշումով ամրագրված իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութը փաստում է, որ Երևան քաղաքի Զաքիյան-Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում՝ Խորենացու փողոցից դեպի խաչմերուկի ուղղությամբ, երթևեկության մասնակիցներին տեսանելի վայրում տեղադրված է 5.15.1՝ <<Երթևեկության ուղղությունները գոտիներով>> ճանապարհային նշան, ըստ որի աջ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել միայն դեպի աջ, իսկ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը երթևեկելով ուղիղ, խախտել է առկա ճանապարհային նշանի պահանջը:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը

որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝ «Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկության ուղղությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, ***իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝*** *հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:*

Տվյալ պարագայում՝ վերը նշված նորմի հիմքով, երթևեկության գոտիների ճիշտ որոշման պարտականությունը դրված է տրանսպորտային միջոցի վարորդի վրա, իսկ տեսանյութի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս հնարավորություն ունեցել հայտնաբերելու, որ երթևեկում է աջ եզրային գոտիով:

Այսպիսով հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 13.07.2020թ. թիվ 2011326048 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Սույն որոշման օրինակն Վերոնիկա Հինյանին:

Ն.Սարգսյան

Կատարող Դ.Բալաբանյան
Հեռ.՝ 011 544-783